

ԱՆՑԵԱԼՔ

I.

ԱՐՄԷԿՆ ԳԱՐՈ

(1873 — 1923)

Ս. ՎՐԱՅԵԱՆ

Այս տարի մարտին լրացաւ Արմէկն Գարօխ մահւան տասնամեակը :

Դեռ երէկ էր կարծես՝ նա մեզ հետ էր իր աղնւական ու սիրելի հոգիով։ Երա շունչը գեռ կենդանի է մեր մէջ ու մեր շուրջը — այնքան մեծ էր նրա աղղեցութիւնն ու հմայքը ամենքի վրա։ Տասը տարի է անցել, բայց մարդ չի կարողանում հաշտւել նրա մահւան հետ։ Եւս առաւել դժւար է գրել նրա մասին, ֆիրեւ մեռածի։ Հոր նա գեռ մեր մէջ է, մեղ հետ...

Արմէկն Գարօն, իսկական անունով Գարեգին Փաստրմաճեան, ծագում էր Կարնոյ մեծահամբաւ Փաստրմաճեանի, որ սպանւց 1872թ. թիւրք կառավարութեան հրահանգով, միայն այն պատճառով, որ մեծ աղղեցութիւն եւ հմայք էր վայելում հայկական շրջաններում։ Արմէկն Գարօն ծնւել էր 1873 թւին եւ նախնական ու միջնակարգ կրթութիւնը ստացել Սանասարեան վարժարանում, որի առաջին ընթացաւարտներից էր, 1891թ.։

Թէ ընտանիքում, թէ դպրոցում մանուկ Գարեգինը դաստիարակւում էր աղգային ողով։ | Փաստրմաճոնց տունը յայտնի աղղային օջախ էր եւ աղգին տեւել էր նշանաւոր դէմքէր։ Գարեգինը մանկութիւնից չնչում էր աղղային մթնոլորտ։ Սանասարեան դպրոցն աւելի եւս հրահրեց ու զարդացրեց այդ ողին։ Եւ երբ 1894թ. նա մեկնեց Եւրոպա ուսանելու, նրա մէջ այնքան ուժեղ չէին անհատական ձգտումները, որքան հայրենիքին օգտակար լինելու տենչը։ Նա մտածում էր սովորել երկրագործական գիտութիւններ եւ հողագործութեան նորագոյն ձեւեր մտցնել հայրենի երկիրը, նպաստել հայ գիւղացիութեան տնտեսական վերածնութեան։

Եւրոպայում նա մտաւ Նախարի գիւղատնտեսական վարժարանը, ուր այն ժամանակ ուսանում էին քսանից աւելի հայեր։ Նախարին ինսնական թւականների սկզբին Եւրոպայում մօտառութիւն ունեցած էր կատարում, ինչ որ Մոսկուայի Պետրովկան։ Այստեղից էին գուրս եկել Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներ։ Այստեղից գուրս եկան եւ Բանք Օթոմանի հերոսները։

Գարեգինը եռանդով նսիրւեց դպրոցական աշխատանքին, բայց շուտով վրա հասան 1895 թւի կոտորածները, որոնք ցնցեցին

ամբողջ հայութիւնը։ Նրանք վերջ տևին եւ Գարեգինի ու իր ընկերների ուսանողութեան։ Պատասխանելով Հ.Յ.Դաշնակցութեան որոշման, երեք ընկերների հետ — Հայկ Թիրաքեան, Սարգիս Սրենց, Մ. Նելրուզ — Գարեգին Փաստրմանեանը, այժմ արդէն Արմէն Գարօ, դիմեց դէպի վրէժի սրբազն մարտաղաշտ։ Այդ նա էր՝ որ Հրաչի, Բարկէն Սիւնիի եւ ուրիշ դաշնակցական երիտասարդների հետ գրաւեց Բանկ Օթոմանը եւ մեծ պետութեանց ներկայացուցիչներին թելադրեց Հայկական պահանջները։

Մենք կանդ չենք առնի պատմական այս դէպի մանրամասնութիւնների եւ հետեւանքների, ոչ էլ Բանկի հերոսների հետաղայ գեղերումների վրա։ Արմէն Գարօն համեմատաբար բախտաւոր զուրս եկաւ։ Թէ եւ Հանուտօի թրքասէր կառավարութիւնը թոյլ չաւեց նրան շարունակելու ուսումը Նանսիում, նա յաջողեց մտնել Ժընեւի համալսարանը սովորելու համար հանքարանութիւն եւ 1900թ. աւարտեց գիտութեան զոկուրի տիտղոսով։ Այստեղից անցաւ Կովկաս, ուր 1901 թւին Թիֆլիսում հիմնեց քիմիական լաբորատորիա հանքային հետազոտութիւնների համար։

Բանկի դէպի յետոյ Արմէն Գարօն այլեւս Հ.Յ.Դաշնակցութեան գործօն անդամներից էր։ Ժընեւում նա մասնակցում էր Արեւմտեան Բիւրօի եւ «Դրօշակ»ի խմբագրութեան աշխատանքներին։ Կուսակցութեան դէկալիար զիրքերում մնաց եւ Կովկասում, ուր շուտով վրա հասան հեկեղեցական կալւածների դրաւման դէպիքերը, ապա Հայ-թրքական ընդհարումները։ Արմէն Գարօն Ինքնապաշտպանութեան կոմիտէի անդամ էր, իսկ երբ 1905թ. նոյեմբերին հայ-թրքական կոփեները հասան եւ թիֆլիս, նա կանգնեց 500 դաշնակցական մարտիկների գլուխը եւ մի շարաթանցնեատ վարեց յաղթական ճակատամարտներ թուրք հաղարաւոր զինւած խուժանի դէմ։

Հայ-թրքական կոփեներից յետոյ Արմէն Գարօն նոյեմբեց հանքային աշխատանքների։ Նա ձեռնարկեց պղնձագործական մի մեծ ընկերութեան կազմակերպութեան եւ արդէն կանգնած էր նիւթական փայլուն յաջողութիւնների շեմքին, երբ պայթեց Օսմանեան յեղափոխութիւնը, եւ Կարնոյ ժողովուրդը հեռազբով հրաւիրեց նրան՝ զնելու իր թեկնածութիւնը Խորհրդարանի անդամութեան համար։ Նա թողեց ամէն բան եւ շտապեց Հայրենիք։ 14 տարւայ տարագիր եւ աստանդական կեանքից յետոյ, նա վերադարձաւ յաղթական եւ ըստ արժանաւոյն դրաւեց երեսփոխանական աթոռը Օսմանեան կայսրութեան Խորհրդարանում, որ պահեց չորս տարի։

Իբրեւ Խորհրդարանի անդամ եւ պետական դործիչ, Արմէն Գարօն նոյեմբեց գերազանցապէս երկրի ներքին գործերին։ Նրան մասնաւորապէս զբաղեցնում էր երկաթուղիների խնդիրը Հայաստանի մասներում։ Այդ նրա կազմած ծրագիրն էր Զեսթըրի յայտնի ծրագիրը, որ կառավարական ըրջաններում էր ջերմ համակրանք չտառա, բայց իրազործումը ձգձգւեց եւ, ի վերջոյ, անկարելի



ԱՐՄԵՆ ԳԱՐՈ

(Նկարւած 1917թ. Ամերիկայում՝ գաղափարակից ընկերների հետ)

դարձաւ, գլխաւորապէս, մեծ պետութեանց մբցակցութեան եւ Ռուսաստանի հակառակութեան հետեւանքով:

Արմէն Գարօն հետզհետէ աչքի ընկաւ իբրեւ ձեռնհաս, շիտակ, պետական շահերով տողորւած եւ գործնական մտքի տէր գործիչ: Նա ճառախօս չէր, ամբիոնի վրա չէր երեւում, բայց պետական գործի աշխարհում օժտւած էր բարձր կարողութիւններով ու հեղինակութեամբ: Նրան մի քանի անգամ առաջարկեց նախարարական աթոռ, յատկապէս հանրային աշխատանքի զեկավարութիւնը, բայց նա վճռական կերպով մերժեց. չէր հաւատում թիւրք վարչէների ուղղամտութեան: Իթթիհատի հետզհետէ աճող նեղ՝ ազգայնական ու հակահայ քաղաքականութիւնը աւելի եւ աւելի ամբացնում էր նրա մէջ այն միտքը, թէ՝ «թիւրքից մարդ դուրս չի դայ», թիւրքերից ո՛չ մի սպասելիք չկայ եւ նորից պէտք է դուրսը փնտրել փրկութիւն:

1912 թւին, երբ պայթեց Բալկանեան պատերազմը, եւ գրեթէ բոլոր հայ գործիչների պէս Արմէն Գարօն էլ վարեց «րարենորոգումների» գաղափարին, մեծ պետառթիւնների հոլանաւորութեան տակ: Նա չերմ մասնակցութիւն ունեցաւ եւ մեծ եռանդ յայտնաբերեց բոլոր այն իրադարձութիւնների մէջ, որոնք յանդեցին «մարզպաններ»ի նշանակման: Ուստի, շատ զարմանալի չէ, որ Իթթիհատական կառավարութիւնը ոդի ի բոխն հակառակեց նրա թեկնածութեան 1914ի խորհրդարանական ընտրութիւններին: Կարնոյ հայութիւնը չուզելով Արմէն Գարօից դատ ուրիշ պատգամաւոր ունենալ՝ բոյկոտ յայտարարեց այդ ընտրութիւններին:

1914թ. աշնանը, Հ. Յ. Բիւրօի որոշումով, Արմէն Գարօն պիտի գնար կարին՝ փոխարինելու համար Ռուսոսմբին կուսակցական գործերի մէջ: Սակայն, երբ Թիֆլիս հասաւ, արդէն ոռուս-թիւրքական սահմանը փակւել էր: Նա մնաց Թիֆլիսում, զործոն մանակցութիւն ունեցաւ կամաւորական խմբերի կազմակերպութեան մէջ, դարձաւ կամ. Խմբերի կարգադրիչ Մարմնի անդամ եւ իբրեւ այդ մարմնի ներկայացուցիչ, երկրորդ խմբի հետ մէկնեց ուղղամաճակատ: Երբ նոյ. 14ին վիրաւոքւեց երկրորդ զնդի հրամանատար Դրօն, Արմէն Գարօն բռնեց նրա աեղը եւ մինչեւ ընդհանուր նահանջ, 1915ի ձմեռը, վարեց խումբը Ալաշկերտի, թութախի եւ Մալագերտի շրջաններում:

Երբ 1915թ. ապրիլին Արարատեան հայ կամաւորական Զոկատի օժանդակութեամբ ազատագրւեց Վանը, Արմէն Գարօն շտապեց այնտեղ՝ գործակցելու համար Արամին: Նա ապրեց նորազարդ Վասպուրականի ուրբախութիւնը. քիչ յետոյ, տեսաւ եւ Վանի քայլայումը, իբրեւ հետեւանք նոր նահանջի:

1915 թւի ամառը սկսան հասնել թիւրքահայոց տեղահանութեան եւ կոտորածի լուրեր: Ամէն լուր լախտի ուժեղ հարւած էր Արմէն Գարօի որտին: Հողեկան ծանր տաղնապներ անցկացրեց նա: Քաշւեց մի անկիւն Գանձակում, հետու լնկերներից ու հասարակութիւնից: Անձնատուր ահաւոր վշտին՝ նա թւում էր սըր-

տարեկ, ընկճւած, այլ եւս ըոլորովին անպէտք, դուրս ընկած կեանքի շարքերից:

Բայց ահա պայմեց ռուսական յեղափոխութիւնը 1917թ. դարինանը: Ցնցւեց եւ Արմէն Գարօն: Նա դուրս եկաւ Գանձակի ճգնաբանից եւ նոր թափով նետւեց հասարակական կեանքի ասպարէդ: Նրան գրաւում էր արտասահմանը: Իր հոգու խորդում, անշուշտ, նա մտածում էր, որ այնտեղից աւելի հեշտ կը լինի տեղեկութիւններ ստանալ Երկրի մասին, այլեւ գուցէ, օգնութեան հասնել: Զինւած Կաթուղիկոսի եւ Սզգային Բիւրօի լիազօրագրերով նա շտապեց Պետրոգրադ, այնտեղից Ամերիկա, ուր կառավարութեան եւ Հանրային կարծիքի առջեւ ձեռնհասութեամբ ու պատով ներկայացրեց հայ ժողովուրդն ու Հայկական հարցը: Այդ տարիների Արմէն Գարօի յուրումնալից ու փայլուն գործունէութեամբ վկաներ շատ կան, խօսքը պատկանում է նրանց: Եթէ Ամերիկան 1918-20 թւականներին այնքա՞ն ջերմ վերաբերում ցոյց տւեց դէպի հայն ու Հայաստանը, մեծ չափով պարտական ենք, անշուշտ, եւ Արմէն Գարօի թափած ջանքերին:

Հայկական պետութեան ստեղծումն ու Հայաստանի ներքին եւ արտաքին յաջողութիւնները անսահման ողեւրութիւն էին պատճառում Արմէն Գարօին: Երիտասարդ խանդավառութեամբ լի՛ նա հաւատացած էր, որ հեռու չէ այլեւս այն օրը, երբ հայկական զօրքերը կը մտնեն կարին ու Վան, եւ հայ ժողովրդի գարերի իշխան՝ Միացեալ եւ Անկախ Հայաստանը կը գառնայ իրականութիւն: Այս հաւատը նա ցուցադրում էր գործի բոլոր ասպարէցներում՝ ե՛ւ իրբեւ կաթուղիկոսական պատիրակ ամերիկան ժողովրդի եւ կառավարութեան առջեւ, ե՛ւ Հ. Յ. Ամերիկայի ըրջանի Պատգամաւորական եւ այլ ժողովներում, ե՛ւ Փարիզի Արևմտահայ համագումարներում ու Սզգ. եւ Հ. Հ. Պատվիրակութեանց ըրջանակներում, ե՛ւ մամուլի ու հասարակութեան մէջ — ապա եւ իրբեւ Հայաստանի Հանրապետութեան առաջին դիւնագիրտական ներկայացուցիչ Վաշինգտոնում — ամէն տեղ երբեմն, թերեւս, նոյն իսկ չափազանցած լաւատեսութեամբ: Եւ իր հաւատով վարակում ու գործի էր մզում ամենքին:

Արմէն Գարօն մեծ հեղինակութիւն ունէր եւ Հայաստանում, կարելի է ասել, հասարակական բոլոր խաւերի մէջ: 1919թ. ձմեռ, Ռոստոմի մաէկից յետոյ, երբ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ զգացւեց հանրաճանաչ եւ անվիճելի զեկավարի պակասը, ամենքի աչքը գարձաւ դէպի Արմէն Գարօն: 1919թ. ամառը, Մայիս 28ի ակտից յետոյ, եւ 1920թ. դարնանը, երբ Հայաստանը ուժեղ իշխանութեան որոնումի մէջ էր, գարձեալ ամենքի ուշադրութիւնը ուղղեց Ա. Գարօի կողմը: Նա ինքը, սակայն, զտնում էր զեռ վազաժամ իր վերաբարձը. Ամերիկայում կարեւոր գործ կարանելիք: Նա սպասում էր, որ Հայաստանը զառնայ Ազգերի Լիգայի անդամ, որ Ամերիկան ճանաչէ իրաւապէս Հայաստանի Հանդապետութիւնը, որ վերջնականապէս ճշտեն հայ-ամերիկեան բարետութիւնը, որից վերջնականապէս ճշտեն հայ-ամերիկեան փոխարարերութիւնները, որից յետոյ միայն մտածում էր վե-

բաղառնալ հայրենիք եւ նվիրւել պետական աշխատանքին, կամ, ինչպէս յաճախ սիրում էր կատակել, վանայ լծի եղերքին հաստատել օրինակելի մի ագարակ:

Աւազ՝ նրան չվիճակւեց տեսնելու այդ օրերը. շուտով վրա հասան աղջտի եւ հիսաթափութեան նոր փորձութիւններ. անյաջող պատերազմ, անկանութեան փլուզում, բոլեւեղմ, կիլիկիս, Պոլիս, Իզմիր, նոր գաղթ եւ աւել — խորտակւեց եւ Արմէն Գարոի հոգին: 1923թ. գարնան նա թողեց Ամերիկան եւ հիւծւածու մաշւած, կէսող, կէսմեռած անցաւ Փարիզ, ապա Ժընեվ իր ընտանիքի մօտ: Ով տեսել է այդ օրերին Արմէն Գարոին, կարող է վկայել, որ նրա ստւերն էր միայն մնացել. այնքան սաստիկ էր ստացած հարածը: Թէեւ հաւատը, քամու դէմ մաքասող ճրագի պէս, դեռ պլազում էր նրա հոգում. նա երազում էր չուտով մեկնել Հայաստան եւ կեանքի վերջին մասը ապրել Մասսի հովանու ներքեւ, բայց բախտը մինչեւ վերջ մնաց անողոք նրա վերաբերմամբ: Լողանի զարհուրանքն էլ ճաշակելուց յետոյ, 1923թ. մարտ 27ին, նա փչեց իր վերջին չունչը: Եւ այժմ հանդչում է ժընեւի գերեզմանատանը՝ մեր ժողովրդի պէս տարապիրու հայրենաբազծ:

II.

ԱԻԵՏԻՔ ՇԱՀԽԱԹՈՒԻՆԵԱՆ

1918թ. հոկտ. 19ին, Թիֆլիսում, թոքատապից վախճանւեց Աւետիք Շահխաթունեանը, հայ մտաւորականութեան ընտիր ներկայացուցիչներից մէկը, որ հետզհետէ սկսում էր աչքի ընկնել ոչ միայն հայ, այլ եւ համակովկասեան իրականութեան մէջ: Շահխաթունեանի անգերազանցելի բնութագիրը գծւած է նիկ. Աղբալեանի տաղանդաւոր գրչով, «Հորիզոն»ում, մահւանից անմիջապէս յետոյ: Կարծում ենք, որ երիտասարդ գիտնական-հրապարակագրի մահւան 15 ամեակը յիշելու լաւագոյն ձեւը կը լինի Աղբալեանի այդ գրւածքի արտատպութիւնը՝ կցելով նրան կենսագրական հետեւեալ հակիրճ տեղեկութիւնները:

Աւետիք Շահխաթունեանը ծնւել էր 1883թ. իգդիրում, ուր նրա հայրը՝ Տիգրան Շահխաթունեանը զաւառապետի պաշտօն էր վարում: Հինգ տարեկան հասակում թոքատապից բռնւելով՝ Աւետիքը ամբողջ կեանքում մնաց կուղ եւ առողջութեամբ տկար:

Շէն, ամէն բարիքով լի տուն էր Շահխաթունեանների տունը, ուր տիրողը հայկական ողին էր: Մանուկ Աւետիքը ըրջապատւած էր ծնողական գուրգուրանքով: Նա ստացաւ նախնական լաւ կրթութիւն: 1904թ. մրցանակով աւարտեց Երեւանի գիմնազիան, ապա Մոսկվայի համալսարանի իրաւաբանական բաժնը, որից յետոյ, ներիւեց կրթական-հանրային գործունէութեան:

Արդէն գիմնազիայում ու համալսարանում Շահխաթունեա-